ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի No49

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 7-ի №14 հերթական նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների քննարկման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
3. Քաղաքացիների կողմից նախկինում վարձակալած համայնքային սեփականություն հանդիսացող գույքը գնելու նպատակով վարձակալած գույքի նկատմամբ լրացուցիչ համաձայնագիր կնքելու մասին:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը քաղաքացու սեփականության հանդիսացող հողամասերով փոխանակելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող թվով 2 (երկու) ծառայողական ավտոմեքենաներից մեկը՝ VAZ 21214 մակնիշի 298LL17 պետհամարանիշի ավտոմեքենան ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի «Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին դպրոց հաճախող ազատամարտիկների և անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճար փոխանցելու մասին:
7. «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»-ին պատերազմի կողմից տուժած բնակավայրերի, ինչպես նաև անօթևան մնացած հայրենակիցներին տներ կառուցելու համար գումար փոխանցելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակիչ Ռիմա Լևոնի Գրիգորյանի համար գազի վառարան ձեռք բերելու նպատակով գումար փոխանցելու մասին:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի N50

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 32)-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 4-ի N01/15.1/4373-16 գրությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված խախտումները, թերությունները առաջակվող ժամկետներում համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին և արդյունքների մասին ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«07» նոյեմբերի 2016 թվականի N051

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով նաև Նվարդ Երվանդի Հարությունյանի, Եպրաքսյա Արմավելի Եփրեմյանի և Սեյրան Գառնիկի Հայրապետյանի դիմումները համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Նվարդ Երվանդի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 185-006-3 ծածկագրի տակ գտնվող 0.5 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքին կից համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0185-0038 ծածկագրի տակ գտնվող 0.45843 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքը ուղղակի վաճառքի միջոցով՝ հողատարածքի կադաստրային արժեքով՝ 1 քմ-ի համար 118.5 (հարյուր տասնութ ամբողջ հինգ տասնորդական) դրամ, որը 0.45843 հա մակերեսով հողամասի համար կազմում է՝ 543 240 (հինգ հարյուր քառասուն երեք հազար երկու հարյուր քառասուն) դրամ, վաճառել Նվարդ Երվանդի Հարությունյանին նրան սեփականության իրավունքով պատկանող թիվ 185-006-3 ծածկագրի տակ գտնվող 0.5 հա մակերեսով մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքի ընդլայնման համար:

2. Եպրաքսյա Արմավելի Եփրեմյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 07-029-0143-0040 ծածկագրի տակ գտնվող 0.9906 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքին կից համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0143-0061 ծածկագրի տակ գտնվող 0.796 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքը ուղղակի վաճառքի միջոցով՝ հողատարածքի կադաստրային արժեքով՝ 1 քմ-ի համար 6.75 (վեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) դրամ, որը 0.796 հա մակերեսով հողամասի համար կազմում է՝ 53 730 (հիսուն երեք հազար յոթ հարյուր երեսուն) դրամ վաճառել Եպրաքսյա Արմավելի Եփրեմյանին նրան սեփականության իրավունքով պատկանող թիվ 185-006-3 ծածկագրի տակ գտնվող 0.5 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքի ընդլայնման համար:

3. Սեյրան Գառնիկի Հայրապետյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող թիվ 022-032 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.12 հա մակեերսով հողատարածքին կից համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0022-0039 ծածկագրերից բնակավայրերի նշանակության 0.03800 հա մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքի միջոցով՝ հողատարածքի կադաստրային արժեքով՝ 1 քմ-ի համար 4524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ, որը 0.03800 հա մակերեսով հողամասի համար կազմում է 1 719 120 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնինը հազար հարյուր քսան) դրամ վաճառել Սեյրանի Գառնիկի Հայրապետյանին նրան համատեղ սեփականության իրավունքով պատկանող թիվ 022-032 ծածկագրի տակ գտնվող 0.12 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողատարածք ընդլայնման համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի No52

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 627-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով նաև Հովիաննես Զավենի Հարությունյանի, Հայկ Արշակի Պետրոսյանի և Վարդանիկ Սերոժի Անտոնյանի դիմումները համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հովիաննես Զավենի Հարությունյանի նախկին վարձակալական պայմանագրի նկատմամբ կնքել լրացուցիչ համաձայնագիր 1.1 կետում նշված 2.8 հա մակերեսը 1.3 հա մակերեսով փոխարինելու մասին
2. Հովիաննես Զավենի Հարությունյանի կողմից նախկինում վարձակալած համայնքային սեփականության հանդիսացող թիվ 07-029-0201-0032 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 1.3 հա մակերեսով հողամասի նկատմամբ կնքել լրացուցիչ համաձայնագիր գույքը կադաստրային արժեքով գնելու պայմանով՝ որը կազմում է ՝ 474 500 (չորս հարյուր յոթանասուն չորս հազար հինգ հարյուր) դրամ:
3. Հայկ Արշակի Պետրոսյանի կողմից նախկինում վարձակալած համայնքային սեփականության հանդիսացող թիվ 020-035 ծածկագրի բնակավայրերի նշանակության 0.04 հա մակերեսով հողամասի նկատմամբ կնքել լրացուցիչ համաձայնագիր գույքը կադաստրային արժեքով գնելու պայմանով՝ որը կազմում է ՝ 1 809 600 (մեկ միլիոն ութ հարյուր ինը հազար վեց հարյուր) դրամ:
4. Վարդանիկ Սերոժի Անտոնյանի նախկին վարձակալական պայմանագրի նկատմամբ կնքել լրացուցիչ համաձայնագիր 1.1 կետում նշված 1.0 հա մակերեսը 1.10469 հա մակերեսով փոխարինելու համար
5. Վարդանիկ Սերոժի Անտոնյանի կողմից նախկինում վարձակալած համայնքային սեփականության հանդիսացող թիվ 07-029-0185-0058 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 1.10469 հա մակերեսով հողամասի նկատմամբ կնքել լրացուցիչ համաձայնագիր գույքը կադաստրային արժեքով գնելու պայմանով՝ որը կազմում է ՝ 74 567 (յոթանասուն չորս հազար հինգ հարյուր վաթսուն յոթ) դրամ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի No53

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 589-րդ հոդվածի 2-րդ մասի, պահանջներով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0020-0103 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նշանակության 0.24 հա մակերեսով հողամասը՝ (սեփ. վկայական N 12102016-07-0050) փոխանակել քաղաքացի Բախշիկ Վարդանին Խուդոյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող թիվ 07-029-0020-0114 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նշանակության 0.24 հա մակերեսով (սեփ. վկայական N 10112016-07-0025) նույն կատեգորիայի հողամասով:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0020-0109 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նշանակության 0.24 հա մակերեսով հողամասը՝ (սեփ. վկայական N 12102016-07-0052) փոխանակել քաղաքացի Ալբերտ Հայկի Կյուրեղյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող թիվ 07-029-0020-0116 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նշանակության 0.24 հա մակերեսով (սեփ. վկայական N 10112016-07-0024) նույն կատեգորիայի հողամասով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ 6 | Դեմ 0 | Ձեռնպահ 0 |

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի No54

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ VAZ 21214 ՄԱԿՆԻՇԻ 298LL17 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով նաև համայնքի աճուրդային հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 20-ի և 2016 թվականի նոյեմբերի 4-ի արձանագրությունները աճուրդների չկայացման մասին, ինչպես նաև հաշվի առնելով Ստեփան Սերոբի Ստեփանյանի դիմումը համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող VAZ 21214 մակնիշի 2008 թվականի արտադրության (նույնականացման համար՝ XTA21214081872949) Զովունիի գյուղապետարանին պատկանող ծառայողական ավտոմեքենան ուղղակի վաճառքով՝ «Արժեք» ՍՊԸ-ի կողմից գնահատված 815 000 (ութ հարյուր տասնհինգ հազար) դրամով վաճառել Զովունի գյուղի բնակիչ Ստեփան Սերոբի Ստեփանյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի No55

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԶՈՎՈՒՆՈՒ Ռ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՎ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի «Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 156 գրությունը՝ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բյուջեից «Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին փոխանցել 497 960 (չորս հարյուր իննսուն յոթ հազար ինը հարյուր վաթսուն) դրամ՝ որպես դպրոց հաճախող ազատամարտիկների և անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարներ, համաձայն «Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ցուցակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի No56

## «ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բյուջեից «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»-ին պատերազմի կողմից տուժած բնակավայրերի, ինչպես նաև անօթևան մնացած հայրենակիցներին տներ կառուցելու համար փոխանցել 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2016 թվականի No57

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌԻՄԱ ԼԵՎՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳԱԶԻ ՎԱՌԱՐԱՆ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Ռիմա Լևոնի Գրիգորյանի սոցիալական վիճակը համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակչուհի Ռիմա Լևոնի Գրիգորյանի գազի վառարան ձեռքբերելու համար համայնքի բյուջեից փոխանցել 60 000 (վաթսուն հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Արթուր Նավասարդյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ